ԱՐԵՎՄՏՅԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆԻ ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2026

Թեստերի առաջադրանքներ

Ի գիտություն դիմորդներին
Քննական թեստը ներառում է 30 առաջադրանք, որոնց կատարման համար դիմորդին տրամադրվում է 60 րոպե ժամանակ:

1. Ո՞ր զույգի կղզիներն են գտնվում Միջերկրական ծովում / 4մ /

1) Հոնսյու և Կալիմանտան
2) Սուլավեսի և Ճամայկա
3) Հոկայդո և Մադագասկար
4) Սարդինիա և Կորսիկա

2. Նշվածներից ո՞ր երկիրն է եգիպտացորենի հայրենիքը: /4մ/

1) Չինաստան
2) Եգիպտոս
3) Հնդկաստան
4) Մեքսիկա

3. Համաշխարհային տրանսպորտի ճյուղերից ո՞րի միջոցով է կատարվում համաշխարհային ուղևորափոխադրումների կեսից ավելին /4մ/

1) ավտոճանապարհային
2) երկաթուղային
3) գետային
4) օդային

4. Ասիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ. /4մ/

1) Աղքատ է ոսկու պաշարներով:
2) Տրանսպորտային ցանցը խիտ է:
3) Հարուստ է ալյումինի պաշարներով:
4) Բնակչության միջին խտությունը փոքր է

5. Առանձին երկրում պատմականորեն ձևավորված մարդկու աշխատանքային գործունեության ամբողջությունը կոչվում է. /4մ/

1) ազգային տնտեսություն
2) աշխատանքի բաժանում
3) համաշխարհային տնտեսություն
4) տնտեսական միասնացում

6. Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Բրազիլիան աշխարհում գրավում առաջին տեղը. /4մ/

1) կակաոյի
2) բամբակենու
3) սուրճի
4) արևածաղկի

7. Որ երկրում է առանձահատուկ բարձր զարգացում ստացել ծաղկաբուծությունը: /4մ/

1) Ֆինլանդիա
2) Նիդեռլանդներ
3) Ֆրանսիա
4) Նորվեգիա

8. Ո՞ր գետի վրա է գտնվում «Երեք կիրճ» ջրէկ-ը: /4մ/

1) Յանցզի
2) Պարանա
3) Ենիսեյ
4) Լենա

9. Աֆրիկայի ո՞ր երկրները ելք *չունեն* դեպի ծով. /4մ/

1) Նիգեր և Ռուանդա
2) Թունիս և Մարոկկո
3) Գանա և Մավրիտանիա
4) Մոզամբիկ և Տանզանիա

10. Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ. /4մ/

1) Աշխարհի ամենախիտ բնակեցված երկրներից է:
2) Արդյունաբերության առաջատար ճյուղը թեթև արդյունաբերությունն է:
3) Բնակչության թվով ամենախոշոր քաղաքը Օսական է:
4) Շաքարի ճակնդեղի ցանքերն զբաղեցնում են երկրի մշակվող հողերի մոտ կեսը:

11. ՀՀ–ում ո՞ր մարզն է ամենախտաբնակը: /6մ/

1) Սյունիքը
2) Լոռին
3) Արմավիրը
4) Շիրակը

12. Ո՞ր քաղաքներն են Երևանին ավելի մոտ. /6մ /

1) Վեդին և Արարատը
2) Ապարանը և Թալինը
3) Արթիկը և Մարալիկը
4) Աբովյանը և Նոր Հաճընը

13. Դեպի Պարսից ծոց ելք չունի ./6մ/

1) Թուրքիան
2) Քուվեյթ
3) Իրանը
4) Իրաքը

14.Ֆրանսիային սահմանակից պետություն չէ.

1) Գերմանիան
2) Իսպանիան
3) Իտալիան
4) Ավստրիան

15. Եվրոպայի գաճաճ պետություններից չէ ./6մ/

1) Անդորրան
2) Մոնակոն
3) Սան Մարինոն
4) Սինգապուրը

16 . Գեղարքունիքի մարզում բուսաբուծության ո՞ր ենթաճյուղը զարգացած չէ. /6մ/

1) ծխախոտի մշակությունը
2) հացահատիկի մշակությունը
3) կարտոֆիլագործությունը
4) բանջարեղենի մշակությունը

17. Նշված միջազգային կազմակերպություններից ո՞րն է զբաղվում ատոմային էներգիայի ուսումնասիրությամբ և բնակչության ճառագայթային անվտանգության ապահովման հարցերով: /6մ/

1) ՅՈՒՆԵՍԿՈ
2) ՅՈՒՆԵՊ
3) ՄԱԳԱՏԵ
4) ԲՊՄՄ

18. Գրել այն պետությունը որի պետական կառավարման ձևը բացարձակ միապետական է . /6մ/

1) Քուվեյթ
2) Շվեդիա
3) Բելգիա
4) Իսպանիա

19. Գրել այն պետությունը որը ելք չունի դեպի ծով: /6մ/

1) ՌԴ
2) ԱՄՆ
3) Չադ
4) Չիլի

20. Տրված ՀՀ ազգերը դասավորել բնակչության թվի նվազման կարգով./6մ/

1) եզդիներ
2) հայեր
3) ռուսները
4) ասորիներ

21. Զույգերով տրվածներից որո՞նք են պղնձաքարային հանքավայրեր: /10մ/

1) Ալավերդին և Կապանը
2) Սոթքը և Մեղրաձորը
3) Փամբակի և Շվանիձորի
4) Սվարանցի և Հրազդանի

22. ՀՀ մարզ – մարզկենտրոն զույգերից ընտրել *սխալը*: /10մ/

1) Լոռի – Վանաձոր
2) Շիրակ – Գյումրի
3) Արարատ – Արարատ
4) Սյունիք Կապան

23. Ո՞ր մայրցամաքում է գտնվում աշխարհի ամենաբարձր ջրվեժը: /10մ/

1) Աֆրիկա
2) Հյուսիսային Ամերիկա
3) Ավստրալիա
4) Հարավային Ամերիկա

24. Տրված պնդումներից ո՞րը բնորոշ *չէ* համամոլորակային հիմնախնդիրներին: /10մ/

1) Համամոլորակային հիմնախնդիրները վերաբերում են թե՛ ամբողջ մարդկությանը, թե՛ յուրաքանչյուր մարդու:
2) Այս հիմնախնդիրներին բնորոշ է սերտ փոխկապակցվածությունը և փոխպայմանավորվածությունը:
3) Այս հիմնախնդիրները ոչ մի հետևանք չեն թողնում տնտեսության զարգացման վրա:
4) Կարող են լուծվել ամբողջ մարդկության ջանքերով և բոլոր երկրների մասնակցությամբ:

25. Զույգերով տրված մշակաբույսերից ո՞րոնք են թելատու տեխնիկական:/10մ/

1) արևածաղիկը և սոյան
2) բրինձը և եգիպտացորենը
3) ջութը և սիսալը
4) սուրճ և կակաոն

26. Ո՞րն է Ուկրաինայի ազգային արժույթը: /10մ/

1) Ռուբլի
2) Գրիվնա
3) Զլոտի
4) Լև

27. Գյուղատնտեսական ո՞ր մշակաբույսի արտադրությամբ է Ուկրաինան ավանդաբար զբաղեցնում առաջատար դիրքեր աշխարհում: /10 մ/

1) Բրինձ
2) Արևածաղիկ
3) Սուրճ
4) Բամբա

28. Ինչպե՞ս է հաճախ անվանում Ուկրաինան՝ իր բերրի սևահողերի և հացահատիկի մեծածավալ արտադրության պատճառով: /10մ/

1) «Եվրոպայի հացի զամբյուղ»
2) «Ասիայի բրնձի շտեմարան»
3) «Եվրոպայի պարգև»
4) «Կանաչ մայրցամաք»

29. Ո՞ր ծովերն են ողողում Ուկրաինայի ափերը հարավում:/10մ/

1) Կասպից և Սև ծովերը
2) Սև և Ազովի ծովերը
3) Միջերկրական և Բալթիկ ծովերը
4) Ազովի և Մարմարա ծովերը

30. Ո՞ր գետն է խաղում ամենամեծ դերը Ուկրաինայի ներքին ջրային տրանսպորտի և հիդրոէներգետիկայի համար: /10մ/

1) Դանուբ
2) Դնեստր
3) Դնեպր
4) Վիսլա

31. Ո՞ր երկրի տարածքը երկու աշխարհամասերում *չէ*. */4մ/*

1) Թուրքիայի
2) Ռուսաստանի
3) Ղազախստանի
4) Իրանի

32. Ընտրել բնակչության թվով գերխոշոր երկրների ճիշտ շարքը /.4մ/

1) Գերմանիա, Ճապոնիա, Չինաստան
2) Ավստրալիա, Բրազիլիա, Եգիպտոս
3) ԱՄՆ, Պակիստան, Ինդոնեզիա
4) Հնդկաստան, Բանգլադեշ,Վիետնամ

33. Տարածքով աշխարհի ամենափոքր երկիրն է. /4մ/

1) Սան Մարինոն
2) Մոնակոն
3) Անդորրան
4) Վատիկանը

34. Կրոնապետություն է./4մ /

1) Մոնակոն
2) Մեծ Բրիտանիան
3) Թուրքիան
4) Վատիկանը

35. Մշակաբույսերից որի՞ մշակությամբ է Չինաստանն աշխարհում գրավում առաջին տեղը. /4մ/

1) կակաոյի
2) բամբակենու
3) սուրճի
4) արևածաղկի

36. Ո՞րը *չի* համարվում Համաշխարհային տնտեսության զարգացման նախադրյալ:/4մ/

1) համաշխարհային շուկան
2) խոշոր մեքենայական արտադրությունը
3) բնակչության ցածր բնական աճը
4) երկաթուղային և ծովային տրանսպորտի զարգացումը

37. Բնութագրումով որոշել պետությունը: /4մ/

Այս պետությունը «Մեծ յոթնյակի» անդամներից է, որը ելք ունի դեպի Միջերկրական ծով: Տարածքը կազմված է մայրցամաքային, թերակղզային և կղզային մասերից: Տնտեսության մեջ հատկապես մեծ է «Ֆիատ», «Ֆերրարի», խոշոր վերազգային ընկերությունների դերը:

1) Իսպանիա
2) Հունաստան
3) Իտալիա
4) Պորտուգալիա

38. Տրված պետություններից ո՞րը հարուստ *չէ* վառելիքային օգտակար հանածոներով:/4մ /

1) Իրան
2) Թուրքիա
3) Ադրբեջան
4) Սաուդյան Արաբիա

39. Քարտեզ 1-ում ո՞ր մարզն է նշված *Ե* տառով:/4մ /

1) Գեղարքունիքի
2) Կոտայքի
3) Արագածոտնի
4) Տավուշի

Քարտեզ 1



40. Տրված կրոններից ո՞րը համաշխարհային *չէ:/4 մ/*

1) քրիստոնեություն
2) հուդայականություն
3) մահմեդականություն
4) բուդայականություն

41. Տրված գյուղատնտեսական մշակաբույսերից ո՞րը *չի* համարվում առույգացնող: /6մ/

1) սուրճ
2) թեյ
3) կակաո
4) սոյա

42. ՀՀ –ում Խաղողագործական շրջան *չէ. /6մ/*

1) Սյունիքի հարավը
2) Արարատյան դաշտը
3) Արփայի հովիտը
4) Շիրակի դաշտը

43. Ո՞ր ոլորտն է վերջին տասնամյակում (մինչև 2022թ. հակամարտությունը) դարձել Ուկրաինայի տնտեսության ամենաարագ զարգացող և արտահանման միտում ունեցող ճյուղերից մեկը: /6մ/

1) Տեքստիլ արդյունաբերություն
2) Տեղեկատվական տեխնոլոգիաներ
3) Ավտոմոբիլաշինություն
4) Զբոսաշրջություն

44. Ուկրաինան ունի երկաթաքարի հսկայական պաշարներ: Ո՞ր քաղաքն է հանդիսանում երկաթաքարի արդյունահանման հիմնական կենտրոնը: /6մ/

1) Կրիվոյ Ռոգ
2) Ժիտոմիր
3) Չեռնովցի
4) Սումի

45. Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի ամենաերիտասարդ ոլորտն է. /6մ/

1) արդյունաբերությունը
2) գյուղատնտեսությունը
3) ծառայությունների ոլորտը
4) տեղեկատվական ոլորտը

46. Տնտեսության այն ճյուղերի ամբողջությունը, որոնք զբաղված են նյութական բարիքների արտադրությամբ, կոչվում է. /6մ/

1) տրանսպորտ
2) ոչ արտադրական ոլորտ
3) գյուղատնտեսություն
4) արտադրական ոլորտ

47. Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալ *չէ* *./6մ/*

1) համաշխարհային շուկան
2) ջերմային տրանսպորտը
3) մեքենայական արտադրությունը
4) աշխատուժը

48. Բնակչության թվաքանակով Եվրոպայում ամենամեծն է. /6մ/

1) Իտալիան
2) Ֆրանսիան
3) Մեծ Բրիտանիան
4) Գերմանիան

49. Աշխարհի բնակչության կեսից ավելին ապրում է. /6մ/

1) Աֆրիկայում
2) Եվրոպայում
3) Ամերիկայում
4) Ասիայում

50. Ո՞ր լեզվաընտանիքին է պատկանում հայերենը. /6մ/

1) սեմաքամյան
2) կովկասյան
3) ալթայան
4) հնդեվրոպական

51. Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրն է./ 10 մ/

1) ԱՄՆ–ը
2) Չինաստանը
3) Գերմանիան
4) Բրազիլիան

52. Համաշխարհային կրոն *չէ. /10մ/*

1) քրիստոնեությունը
2) բուդդայականությունը
3) դաոսականությունը
4) մահմեդականությունը

53. Ածխի արդյունահանմամբ առաջատար երկիրն է. /10մ/

1) Ֆրանսիան
2) Չինաստանը
3) Ճապոնիան
4) Ավստրալիան

54. Հյուսիսում ԱՄՆ–ին սահմանակից պետությունն է. /10մ/

1) Մեքսիկան
2) Վենեսուելան
3) Պանաման
4) Կանադան

55. Նավթի արդյունահանմամբ առաջատար երկիրն է ./10մ/

1) Սաուդյան Արաբիան
2) Իրանը
3) Ֆրանսիան
4) Չինաստանը

56. Ո՞ր գյուղատնտեսական մշակաբույսի արտահանմամբ է Ուկրաինան ավանդաբար զբաղեցնում առաջատար դիրքեր աշխարհում: /10մ/

1) Կակաո
2) Արևածաղիկ
3) Բամբակ
4) Սուրճ

57. Ուկրաինայի տնտեսության մեջ ո՞ր էներգետիկ ճյուղն է ապահովում էլեկտրաէներգիայի արտադրության ամենամեծ բաժիններից մեկը (մինչև 2022 թ. հակամարտությունը՝ մոտ 50%): /10մ/

1) Հողմային էներգետիկան
2) Ատոմային էներգետիկան (ԱԷԿ-ներ)
3) Ջերմային էներգետիկան
4) Արևային էներգետիկան

58. Ընտրել ճիշտ տարբերակը.

Ուկրաինայի ամենամեծ գետը, որն ունի հսկայական տրանսպորտային և էներգետիկ նշանակություն: /10մ/

1) Դնեպր
2) Դանուբ
3) Դնեստր
4) Հարավային Բուգ

59. Ընտրել ճիշտ տարբերակը.

Ուկրաինան հարուստ է երկաթի հանքաքարի պաշարներով, որոնց հիմնական հանքավայրերը գտնվում են ռ±ր ավազանում :/10մ/

1) Կրիվոյ Ռոգ
2) Նիկոպոլ
3) Դոնբաս
4) Լվով-Վոլինյան

60. Ուկրաինայի գլխավոր ծովային դարպասն ու խոշորագույն նավահանգիստը Սև ծովի ափին որ քաղաքն է: /10մ/

1) Նիկոլաև
2) Խերսոն
3) Օդեսա
4) Կիև

61. «Օվկիանոս — ծով» զույգերից ընտրել ճիշտը. /4մ/

1) Հնդկական — Արաբական
2) Խաղաղ — Բարենցի
3) Ատլանտյան — Օխոտի
4) Հյուսիսային սառուցյալ — Կարիբյան

62. Արևելյան Եվրոպայի պետություններից դեպի ծով ելք *չունի*. /4մ /

1) Լեհաստանը
2) Չեխիան
3) Բուլղարիան
4) Ռումինիան

63. Սև ծովյան երկրներ են. /4մ/

1) Վրաստանը և Ուկրաինան
2) Ֆրանսիան և Ռումինիան
3) Բելգիան և Դանիան
4) Եգիպտոսը և Սոմալին

64. Դեպի Սև ծով ելք ունեցող երկիր է. /4մ/

1) Ռումինիան
2) Հունաստանը
3) Ադրբեջանը
4) Մոլդովան

65. Մեքենաներ , սարքավորումներ արտահանող առաջատար երկիր է. /4մ/

1) Ռուսաստանը
2) Կանադան
3) Գերմանիան
4) Ավստրալիան

66. Ո՞ր շարքի բոլոր երկրներն են «Մեծ յոթնյակի» կազմում. /4մ/

1) Իտալիա, Իսպանիա, Ճապոնիա, Կանադա
2) Կանադա, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ
3) ԱՄՆ, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա
4) Ճապոնիա, Ավստրալիա, Կանադա, Ֆրանսիա

67. Էլեկտրաէներգիայի արտադրությամբ առաջատար երկիրն է ./4մ/

1) Չինաստանը
2) Ճապոնիան
3) ԱՄՆ–ը
4) Գերմանիան

68. Թելատու տեխնիկական մշակաբույսեր են. /4Մ/

1) եգիպտացորենը և շաքարեղեգը
2) ջուտը և վուշը
3) ծխախոտը և բամբակենին
4) բրինձը և արևածաղիկը

69. Արևմտյան Եվրոպայի պետություններից *չէ.* /4մ/

1) Ֆրանսիան
2) Գերմանիան
3) Մեծ Բրիտանիան
4) Նիդերլանդները

70. Ավտոմոբիլային ընկերություն — պետություն» սկզբունքով կազմված զույգերից ընտրել սխալը /4մ/

1) «ՏՈՅՈՏԱ» — Ճապոնիա
2) «ՊԵԺՈ» — Ֆրանսիա
3) «ՖՈՐԴ» — ԱՄՆ
4) «ՖԻԱՏ» — Իսպանիա

71. ՀՀ ամենաերկար գետն է. /6մ/

1) Դեբեդը
2) Աղստևը
3) Որոտանը
4) Ախուրյանը

72. ՀՀ ամենաբարձրադիր գյուղն է ./6մ/

1) Վերին Սասնաշենը
2) Վերին Կարմիրաղբյուրը
3) Վերին Շորժան
4) Վերին Հանդը

73. Նավթի պաշարներով հարուստ պետություն է. /6մ/

1) Շվեդիան
2) Գերմանիան
3) Նորվեգիան
4) Իսլանդիան

74. Համաշխարհային տնտեսության ճյուղային կառուցվածքի ամենաերիտասարդ ոլորտն է. /6մ/

1) արդյունաբերությունը
2) գյուղատնտեսությունը
3) ծառայությունների ոլորտը
4) տեղեկատվական ոլորտը

75. Համաշխարհային տնտեսության ձևավորման նախադրյալ *չէ. /6մ/*

1) համաշխարհային շուկան
2) ջերմային տրանսպորտը
3) մեքենայական արտադրությունը
4) աշխատուժը

76. Ածխի արդյունահանմամբ առաջատար երկիրն է./6մ/

1) Ֆրանսիան
2) Չինաստանը
3) Ճապոնիան
4) Ավստրալիան

77. ՀՀ ամենաանտառաշատ մարզն է./6մ/

1) Վայոց ձորը
2) Սյունիքը
3) Տավուշը
4) Լոռին

78. Բնական գազի արդյունահանմամբ առաջատար երկիրն է. /6մ/

1) Ֆրանսիան
2) Չինաստանը
3) Ռուսաստանը
4) Թուրքիան

79. Պողպատի արտադրությամբ առաջատար երկրներ են. /6մ/

1) Իտալիան և Իրանը
2) Չինաստանը և Ճապոնիան
3) Հնդկաստանը և Պակիստանը
4) Կանադան և Բրազիլիան

80. Աշխարհում հեռուստացույց արտադրող առաջատար երկրներն են. /6մ/

1) Ճապոնիան և Չինաստանը
2) Ավստրալիան և Կանադան
3) Հարավային Կորեան և Հնդկաստանը
4) ԱՄՆ–ը և Մեծ Բրիտանիան

81. Սև ծովի ո՞ր նավահանգստային քաղաքն է Ուկրաինայի արտաքին առևտրի և հացահատիկի արտահանման գլխավոր դարպասը։ /10մ /

1) Լվով
2) Խարկով
3) Օդեսա
4) Կիև

82. Ո՞րն է Ուկրաինայի տարածքով հոսող ամենաերկար և ամենաջրառատ գետը։ /10մ/

1) Դնեստր
2) Դանուբ
3) Դնեպր
4) Հարավային Բուգ

83. Ո՞րն է Ուկրաինայի ամենամեծ նավահանգստային քաղաքը Սև ծովի ափին։ /10մ/

1) Նիկոլաև
2) Խերսոն
3) Օդեսա
4) Մարիուպոլ

84. Ո՞ր թերակղզին է գտնվում Ուկրաինայի հարավում՝ Սև և Ազովի ծովերի միջև։ /10մ/

1) Ղրիմի թերակղզի
2) Բալկանյան թերակղզի
3) Տամանյան թերակղզի
4) Կոլայի թերակղզի

85. Ուկրաինայի տարածքը մեծությամբ ո՞րերորդն է ամբողջությամբ Եվրոպայում գտնվող երկրների շարքում։ /10մ/

1) Առաջինը
2) Երկրորդը
3) Երրորդը
4) Հինգերորդը

86. Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրն է. /10մ/

1) ԱՄՆ–ը
2) Չինաստանը
3) Գերմանիան
4) Բրազիլիան

87. ՀՀ–ում բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտվել է. /10մ/

1) Աշոցքի սարահարթում
2) Արարատյան դաշտում
3) Արագած լեռնազանգվածում
4) Շիրակի դաշտում

88. Բնութագրումով որոշել պետությունը. Տարածքի մեծությամբ աշխարհի 7-րդ պետությունն է: Ըստ պետական կա– ռուցվածքի՝ դաշնային հանրապետություն է: Աշխարհի առավել բազմազգ ու բազ– մալեզու պետություններից է: Այս պետությունն առաջատարներից է թեյի, մանգոյի և ադամաթզի բերքով: Ո՞րն է այդ պետությունը. **/10մ/**

1) Իրանը
2) Հնդկաստանը
3) Կանադան
4) Ինդոնեզիան

89. Առողջարանային գործառույթ կատարող քաղաքներ են ./10մ/

1) Կապանը և Քաջարանը
2) Ջերմուկը և Ծաղկաձորը
3) Արարատը և Եղեգնաձորը
4) Ապարանը և Ալավերդին

90. Բնութագրումով որոշել երկիրը. Այս ասիական պետությունն ունի բազմազգ բնակչություն: Բնակչության մեծ մասն ուղղափառ քրիստոնյաներ են: Արդյունաբերության մեջ առաջնային տեղը պատկանում է գյուղատնտեսական հումք մշակող ճյուղերին: Աճեցվող կարևորագույն մշակաբույսերն են թեյը և ցիտրուսային պտուղները: Մակերևույթը լեռնային է, հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով: /10մ/

1) Լիբանան
2) Ադրբեջան
3) Հորդանան
4) Վրաստան

Մաղթում ենք հաջողություն